ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓԻՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՁԵՒԱՉԱՓ. ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌՔ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

ՔՆԱՐԻԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ
k_narik@mail.ru

ՄՈՒՏՔ

1999 Սեպտեմբերի 22-23ին Երեւանում կայացաւ Հայաստան-Սփիւռք համահայկական առաջին խորհրդաժողովը, որի հրաւիրումը պայմանաւորուած էր Հայաստան-Սփիւռք փոխյարաբերութիւնները որակական նոր մակարդակով կառուցելու, Հայաստան-Սփիւռք համագործակցութիւնն արդի պահանջներին համապատասխան կազմակերպելու, համահայկական խնդիրները միասնաբար քննարկելու եւ դրանց լուծման ուղիները նախանշելու անհրաժեշտութեամբ[1]:

Հայաստան-Սփիւռք առաջին խորհրդաժողովի նպատակն էր քննութեան առնել հաւաքեան համար առաջնահերթ կարեւորութիւն ունեցող խնդիրները, ստեղծել նրանց լուծման իրական լծակներով օժտուած համապատասխան կառոյց՝ համազգային նշանակութիւն ունեցող հարցերը համատեղ քննարկելու եւ միասնական ջանքերով լուծելու, Հայաստանի Հանրապետութեան, Արցախի եւ Սփիւռքի քաղաքական, կրօնական եւ հասարակական ղեկավարներին ազգային նպատակների իրականացման խնդիրների շուրջ համախմբելու համար:

Խորհրդաժողովի արդիւնքների հիման վրայ մշակուելու էին ՀՀ եւ Արցախի պետականութեան զարգացմանն ու ամրապնդմանը, Սփիւռքի առաջնահերթ խնդիրների լուծմանը նպատակաուղղուած փոխհամաձայնեցուած ծրագրեր եւ միջոցառումներ՝ հաւաքեան բոլոր հատուածների եւ շրջանակների, իւրաքանչիւր հայի գործօն մասնակցութեամբ:

Ա. ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆԻ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԵԼՈՅԹՆԵՐՈՒՄ ԱՐԾԱՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

1999 Սեպտեմբերի 22ին Երեւանի Մարզահամերգային Համալիրում ՀՀ ազգային ժողովի նախագահ Կարէն Դեմիրճեանը հանդիսաւոր պայմաններում ազդարարեց ՀՀ-Սփիւռք առաջին խորհրդաժողովի բացման մասին: *«Մեր ազգի բազմադարեան պատմութեան մէջ ներկայացուցչական նման բարձրակարգ հանդիպումը, յատկապէս դարավերջին ու նոր հազարամեակի շէմին, ինքնին կարեւոր է: Մենք ոչ միայն փորձում ենք վերահաստատել մեր հաւաքական կամքը*

առաջադէմ մարդկութեանը համաքայլ ազգային նպատակներն ու իղձերը իրականացնելու գործում, այլեւ միասնական ջանքերով օրակարգ ենք մտցնում ժամանակի հրամայականին համապատասխան ընթացք»,[2]- իր բացման խօսքում նշեց Դեմիրճեանը:

ՀՀ-Սփիւռք խորհրդաժողովին մասնակցեց շուրջ 1200 ներկայացուցիչ՝ աշխարհի աւելի քան 50 երկրից[3]: Խորհրդաժողովում հնչեց մօտ 70 ելոյթ, որոնք հիմնականում վերաբերւում էին քաղաքականութեանը, տնտեսութեանն ու մշակոյթին[4]: Ելոյթներով հանդէս եկան Ֆրանսիայի, Գերմանիայի, Միացեալ Թագաւորութեան, ՌԴի, Վրաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Իրանի, Թուրքիայի, Լիբանանի, Իսրայէլի, Կանադայի, ԱՄՆի, Արգենտինայի, Բրազիլիայի, Եգիպտոսի, Հնդկաստանի, Չինաստանի, աֆրիկեան երկրների եւ մի շարք այլ համայնքների ներկայացուցիչները: Ներկայացուեցին զեկոյցներ սփիւռքահայ համայնքներին վերաբերող խնդիրների, ՀՀ տնտեսութեան զարգացման եւ Հայրենիք-Սփիւռք համագործակցութեան վերաբերեալ:

Առանցքային էին Նախագահ Քոչարեանի եւ վարչապետ Սարգսեանի ելոյթները, որոնք աչքի ընկան մի շարք ծրագրային դրոյթներով ու հեռանկարային առաջարկութիւններով:

Սփիւռքի պահպանումն առաջնահերթ համարելով՝ Նախագահ Քոչարեանն ընդգծեց, որ ՀՀն պարտաւորութիւն է ստանձնում սփիւռքահայերի համար համապատասխան իրաւական միջավայր ստեղծել ՀՀում, ինչի առաջին քայլը երկքաղաքացիութիւնն է, տարբեր երկրների հետ միջպետական յարաբերութիւններ կառուցելիս Սփիւռքի գործօնը հաշուի առնելու, համահայկական կառոյցների ձեւաւորմանը նպաստելու հանգամանքը:

«Առաջին անգամ մենք հաւաքուել ենք աշխարհի բոլոր ծայրերից, որպէսզի անկեղծ երկխօսութեամբ քննութեան առնենք նոր հազարամեակում մեր ազգային ինքնութեան զարգացման հիմնախնդիրները:

...Հայաստանը շատ բան ունի տալու Սփիւռքին, եւ Սփիւռքը բան ունի տալու Հայրենիքին: Սա գիտակցում են բոլորը, բայց այդ երկուստեք հսկայական ներուժը շարունակում է մնալ ներուժ եւ դեռ շատ հեռու է լիարժէք կենսագործումից: Ակնյայտ է, որ թէ՛ Հայաստանի, թէ՛ Արցախի, թէ՛ Սփիւռքի առջեւ ներկայումս առկայ են անյետաձգելի լուծում պահանջող ազգային գերխնդիրներ: Առաւել քան ակնյայտ է նաեւ այն, որ այդ խնդիրները լուծելի են մեր ազգային այդ երեք որակների սերտ շարունակական գործակցութեան, ազգային միաբանութեան գերագոյն չափանիշով առաջնորդուելու պայմաններում միայն: Յայտնի է, որ

ազգային միասնության գաղափարը հայ իրականության մշտական ուղեկիցն է եղել»[5], - ընդգծեց Քոչարեանը:

Անդրադառնալով Սփիւռքի կացութեանը՝ նախագահը նշեց. *«Սփիւռքում հայապահպանության խնդիրը լոկ վերացական-զգացմունքային չէ: Այն այսօր դարձել է կենսական՝ առաջին հերթին հենց հայոց պետականության գոյության ու ապագայի համար»*[6]: Ըստ Քոչարեանի՝ այդ հանգամանքները հաշուի առնելով՝ պետութեան դերը Սփիւռքի հարցում հիմնականում հանգում էր հետեւեալներին.

1. Ստեղծել անհրաժեշտ պայմաններ ու հնարաւորութիւններ, ձեռնարկել համակարգուած քայլեր՝ նպաստելու հայապահպանութեան բարենպաստ միջավայրի ստեղծմանը:
2. Միջազգային կանոնակարգերի շրջանակներում պաշտպանել սփիւռքահայերի ազգային շահերն ու իրաւունքները:
3. Սփիւռքահայերի համար առաւելագոյն նպաստաւոր պայմաններ ստեղծել՝ մասնակցութիւն բերելու ազգային պետականութեան ամրապնդման եւ համազգային խնդիրների լուծման գործին:
4. Հնարաւորութիւններ ու նախադրեալներ ապահովել սփիւռքահայութեանն առաւել գործօն ձեւով մասնակից դարձնելու ազգային արժէքների ստեղծման գործին, մշտական ու համակարգուած բնոյթ հաղորդել հոգեւոր, մշակութային, գիտակրթական եւ այլ բնոյթի կապերին ու փոխյարաբերութիւններին:
5. ՀՀում սփիւռքահայերի համար ստեղծել կեցութեան իրաւունքի ու իրաւաքաղաքացիական յարաբերութիւնների համապատասխան միջավայր՝ կեանքի կոչելով՝ «Հայաստանը համայն հայութեան հայրենիքն է» կարգախօսը: Դա անկասկած ենթադրում էր երկքաղաքացիութեան ընդունումը:
6. ՀՀում ստեղծել սփիւռքահայութեան հետ յարաբերութիւնների բազմաշերտ հանգամանքները հաշուի առնող կառուցուածքային համակարգ:
7. Տարբեր երկրների հետ ՀՀ միջպետական յարաբերութիւնների հաստատման ու զարգացման գործում համակողմանի գնահատել ու հաշուի առնել տուեալ երկրում Հայկական սփիւռքի գործօնը:
8. Նախաձեռնել ու նպաստել տարբեր ոլորտներում համազգային հասարակական կառոյցների ձեւաւորմանը:

Ընդգծելով, որ *«Ազգային պետականութիւնից անջատ Սփիւռքը դատապարտուած է դառնալու մարող պատմական յիշողութիւն, իրաքանչիւր նոր սերունդ ակամայ մի քայլ կը հեռանայ իր ազգային ինքնութիւնից»*[7], նախագահը համոզմունք էր յայտնում, որ ազգային պետականութեան առկայութեան եւ Մայր Հայրենիքի հետ որոշակի համակարգուած ու ներդաշնակ յարաբերակցութեան մէջ Սփիւռքը

կարող է դառնալ *«ակտիւ վերարտադրուող եւ մշտանորոգ ազգային գործօն, ստեղծել իր մնայուն ու իւրայատուկ միկրոկլիման՝ թէ՛ առանձին երկրներում եւ թէ՛ տարածաշրջանային ընդգրկումով»*[8]:

Ըստ Քոչարեանի՝ Սփիւռքում հայապահպանութեան եւ ազգային լինելութեան գերխնդրի լուծման տեսակէտից սփիւռքահայութիւնը երկու հիմնական առաքելութիւն ունէր իրականացնելու.-

ա) Ազգապահպանութեան մնայուն խնդիրը՝ բուն Սփիւռքում՝ սեփական ու համազգային կառոյցների միջոցով եւ անկախ ՀՀ ամենաակտիւ մասնակցութեամբ ու աջակցութեամբ.

բ) Անմիջական մասնակցութիւնն ազգային պետականութեան ամրապնդման ու հզօրացման գործին:

ՀՀ Նախագահն իր ելոյթում նախանշեց այն հիմնական ազգային առաջնահերթութիւնները, որոնց շուրջ ծաւալուելու էր Հայրենիք-Սփիւռք նոր համագործակցութիւնը: Որպէս առաջնահերթ նշանակութիւն ունեցող համազգային խնդիրներ Քոչարեանն առանձնացնում էր՝

ա) Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումն ու դատապարտումը.

բ) Արցախեան հիմնահարցի արդարացի լուծումը.

գ) Աղէտի գօտու վերականգնումը.

դ) ՀՀ տնտեսական վերելքին նպաստելը.

«Սփիւռքն, իբրեւ իրողութիւն, արդիւնք ու հետեւանք է Հայոց Ցեղասպանութեան եւ ճակատագրի բերումով հենց նա է սկսել պայքարը միջազգային հանրութեան կողմից Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչելու եւ դատապարտելու ուղղութեամբ»[9],- ընդգծում էր նախագահը: Այդ աշխատանքները Սփիւռքը պէտք է շարունակէր նոր թափով արդէն հայրենի պետութեան հետ ուս-ուսի:

Սփիւռքահայութեան մասնակցութեան ձեւերն ազգային պետականութեան հաստատման ու զօրացման գործին, ըստ Քոչարեանի, հիմնականում ներառում էին.

1. Խորհրդատուական մասնակցութիւն՝ յստակ մշակուած ու կիրառելի խորհրդատուական համակարգի միջոցով.
2. Տեղեկատուական ու մասնագիտական օգնութիւն գիտութեան, կրթութեան, առողջապահութեան եւ այլ ոլորտներում.
3. Կազմակերպական եւ քաղաքական համակողմանի աջակցութիւն հայրենի դիւանագիտութեանը:
4. Մարդասիրական օգնութիւն եւ օժանդակութիւն երկրաշարժի հետեւանքների յաղթահարմանն ու անցման շրջանում գտնուող ՀՀ սոցիալական խնդիրների լուծմանը.
5. ՀՀում եւ Արցախում տնտեսական ու տարաբնոյթ ձեռնարկատիրական գործունէութեան ծաւալում.

6. Ազգային տուրքի միջոցով մասնակցութիւն ՀՀ զօրացմանը.

7. Մասնակցութիւն ազգային հիմնահարցերի, նպատակային ծրագրերի մշակման աշխատանքներին.

8. Համատեղ տեղեկատուական ու ճանաչողական աշխատանքների կազմակերպում (տարբեր գաղթօջախների հետ առանձին-առանձին):

Այնուհետեւ Քոչարեանն առաջարկում էր սկսել մի շարք ծրագրեր, որոնք գործնականում հնարաւոր էր իրականացնել եւ փոխշահաւետ էին ե՛ւ ՀՀ ե՛ւ Սփիւռքի համար. դրանք էին՝

1. միասնական տեղեկատուական դաշտի ստեղծում՝ արբանեակային կապի միջոցով կազմաւորելով համազգային հեռուստաալիք:

2. Համահայկական զարգացման գործակալութեան ստեղծում, որի միջոցով Սփիւռքը աշխուժօրէն կը ներգրաւուէր ՀՀ տնտեսութեան մէջ:

3. «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործունէութեան աշխուժացում, որն ըստ էութեան, նախագահը համարում էր համազգային կառոյց ստեղծելու հաիւթեան առաջին յաջողուած փորձը:

4. Համահայկական մարզական խաղերի եւ մշակութային փառատօների կանոնաւոր անցկացում եւ դրանք նախապատրաստող մշտապէս գործող կազմկոմիտէների ստեղծում, ինչը թոյլ կը տար համախմբել հայրենիքում ե՛ւ տեղի, ե՛ւ արտերկրի կարող, երիտասարդ ուժերին:

5. ՀՀում մշտապէս գործող երիտասարդական կենտրոնի ստեղծում, որտեղ կանոնաւորապէս կ'անցկացուէին բոլոր գաղթօջախներից եկած հայ երիտասարդութեան հաւաքներ:

6. Մասնագիտական բազմաբնոյթ բիզնէս-կազմաւորումների ստեղծում: Որպէս օրինակ Քոչարեանը բերում էր հայ ոսկերիչների, ադամանդագործների միջոցառումները, որոնք թոյլ տուեցին աշխուժացնել տնտեսութեան այդ ճիւղերը:

«Լրջօրէն կազմակերպուած ազգ նշանակում է տնտեսական եւ քաղաքական գործօն: Երրորդ հազարամեակում հաիւթեան տարբեր հատուածներն առանձին-առանձին եւ ողջ հայ ժողովուրդը իբրեւ պատմական կուռ հաւաքականութիւն, կարող են մեծ առաջընթաց եւ նուաճումներ արձանագրել միասնական ջանքով ու նուիրումով: Հազարամեակներ տեւած մեր հարուստ պատմութեան մէջ հայ ժողովրդի այսօրուայ սերունդը ունի իր ուրոյն եւ բացառիկ առաքելութիւնը, որ պարտաւոր է պատուով իրականացնել: Այդ հաւատով ու ակնկալիքով է Հայրենիքը նախաձեռնել այս խորհրդաժողովը, որին մաղթում եմ յաջողութիւններ եւ արդիւնաւէտ աշխատանք»[10],- ամփոփեց իր ելոյթը ՀՀ Նախագահը:

ՀՀն Սփիւռքի համար տնտեսապէս գրաւիչ երկիր դարձնելու առաջարկութիւններով խորհրդաժողովի երկրորդ օրը հանդէս եկաւ վարչապետ Սարգսեանը: *«...Դարն սկսել ենք ողբերգութեամբ, շարունակել ենք ձեռքբերումներով ու կորուստներով, պարտաւոր ենք աւարտել յաղթանակով:*

Ուզում ենք, որ 21րդ դարը լինի մերը՝ հայերիս միասնութեան եւ պետականութեան ամրապնդման ու բարգաւաճման ժամանակը»[11], - նշեց նա:

Այնուհետեւ Սարգսեանը վկայակոչեց մի շարք իրողութիւններ եւ ՀՀ կառավարութեան անունից տուեց դրանցից բխող հարցերի պատասխանները: Այդ իրողութիւններն էին.

1. *«Հայաստանն այլեւս վերացական, մշուշապատ Հայրենիք չէ, որ պէտք է նոր յայտնուի: Այն ռէալ, անկախ երկիր է: Այսօր դա Հայաստանի երրորդ Հանրապետութիւնն է՝ իր մնայուն ձեռքբերումներով, իր անթիւ դժուարութիւններով ու անորոշութիւններով: ...Այս երկիրը մեր դժուարին, բայց թանկագին Հայրենիքն է»*[12]:

2. Պատմական այդ ժամանակահատուածի համար լուծուած համարելով ՀՀի առջեւ կանգնած պայմանական գերխնդիրներից երկուսը՝ յաղթանակն իրեն պարտադրուած պատերազմում եւ ժողովրդի, իշխանութիւնների եւ քաղաքական ուժերի հաւաքական շրջահայեացութեամբ հաստատած ներքաղաքական անշրջելի կայունութիւնը, որը լրջագոյն գրաւականն է յետագայ կենսական քայլերի լուծման համար, վարչապետն ընդգծում էր, որ *«միայն համազգային միակամութիւնը եւ ուժերի միասնական լարումն էր, որ Հայաստանին բերեց անկախութիւն եւ փրկեց Արցախը կործանումից...»*[13]:

3. *«Պատմութիւնը ցոյց է տալիս, որ յաղթում են այն ժողովուրդները, որոնք աւելի կազմակերպուած են եւ ռացիոնալ»*[14],- որպէս գերխնդիր եւ թիւ երրորդ իրողութիւն վկայակոչեց Սարգսեանը:

Այնուհետեւ ՀՀ վարչապետը կարեւորեց ՀՀ տնտեսական վերելքի անհրաժեշտութիւնը, նշելով՝. *«...Այսօր Հայաստանի տնտեսական վերելքը կարեւոր է այնքան, որքան երեկ՝ յաղթանակը պատերազմում»*[15]: Սարգսեանն ընդգծեց, որ պայքարը պատերազմի դաշտից տեղափոխուել է տնտեսական դաշտ, ուստի եկել է մարդասիրական օգնութիւնից լիարժէք համագործակցութեան անցնելու, զգացմունքային տարերային յարաբերութիւններին աւելի արդիւնաւէտ, կազմակերպչական ձեւ տալու ժամանակը:

«Կազմակերպչական նոր ձեւերի կայացման համար անհրաժեշտ են բազմաթիւ նախադրեալներ: Սակայն կարեւորագոյնը բարոյահոգեբանական նախադրեալն է: Թէ՛ Հայրենիքում, թէ՛ Սփիւռքում պառակտումների օրինակները, ցաւօք, շատ են: Մեզ առաջին

հերթին անհրաժեշտ է փոխադարձ վստահություն եւ հանդուրժողականություն: Եւ այս ազդակներն առաջին հերթին պիտի գան Հայրենիքից»[16],- նշեց վարչապետը: Որպէս սկիզբ նա յայտարարեց, որ կառավարութիւնը պարտաւոր եւ պատրաստ է Սփիւռքին ընկալել որպէս հաւասար գործընկեր, անդրադառնալ իրաւական, ֆինանսական, հարկային համակարգերի բարեփոխումներին, ապահովել պայմանագրերի շուրջ ծագող բանավէճերի դատական եւ վարչական կարգաւորումը: Ընդգծելով, որ համագործակցութիւնը ՀՀի հետ լինելու է տնտեսապէս շահաւետ, ներդրումները ՀՀում՝ ձեռնտու, բոլոր վարկերի եւ ներդրումների մասին տեղեկատուութիւնը լուսաբանուելու էր ՀՀ Նախագահի կողմից մատնանշուած համազգային ու պետական հեռուստաալիքներով, վարչապետը շեշտեց, որ վստահութիւնը վերականգնելու, ֆինանսատնտեսական գործընթացները թափանցիկ դարձնելու ուղղութեամբ ՀՀ կառավարութիւնն արդէն իսկ ձեռնարկել է մի շարք որոշակի միջոցառումներ:

Այնուհետեւ Սարգսեանը վկայակոչեց, որ ներքին եւ արտաքին ներդրողներին օժանդակ համալիր ծառայութիւններ մատուցելու համար ստեղծուել է եւ առաջիկայ 5-6 ամիսների ընթացքում լիարժէք կը գործի Զարգացման Հայկական Գործակալութիւնը (ԶՀԳ)[17]: ԶՀԳն հանդիսանալու էր իւրօրինակ պատուհան ՀՀի եւ աշխարհի միջեւ, լինելու էր մէկ կանգառի կենտրոն, որի միջոցով իւրաքանչիւր պոտենցիալ ներդրող կարող էր ստանալ իրեն հուզող բոլոր հարցերի լուծումները՝ օդանաւակայանում դիմաւորման պահից մինչեւ իրաւաբանական, վարչական, տեխնիկական եւ այլ ծառայութիւններ:

Գործակալութեան միջոցով հնարաւորութիւն էր ընձեռուելու առանց բիւրոկրատական քաշքշուկի գրանցել որեւէ ընկերութիւն եւ ստանալ դրա գործունէութեան համար անհրաժեշտ բոլոր արտօնագրերն ու վկայականները:

Գործակալութիւնը իրական կամուրջ էր հանդիսանալու օտարերկրեայ գործարարների եւ ՀՀ իշխանութիւնների միջեւ՝ հնարաւորութիւն տալով նաեւ ՀՀ իշխանութիւններին առաւելապէս իրազեկ լինելու գործարարներին հուզող հարցերին ու ծրագրերին:

Կառավարութիւնը երաշխաւորում էր գործակալութեան գործունէութեան առաւելագոյն թափանցիկութիւն, այն անմիջականօրէն ենթարկուում էր ՀՀ վարչապետին, ուղղակիօրէն աշխատելու հնարաւորութիւն ունէր ՀՀ նախագահի, ԱԺ նախագահի, եւ իշխանութեան միւս մարմինների հետ:

Գործակալութեան ղեկավար մարմիններն էին Հոգաբարձուների Խորհուրդը, որի կազմում ընդգրկուելու համաձայնութիւն էին տուել միջազգային ճանաչում ունեցող գործարարներ, բարերարներ,

միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւնների ղեկավարներ, ինչպէս նաեւ Տնօրէնների Խորհուրդը, որի կազմում ընդգրկուած էին ՀՀ կառավարութեան տնտեսական բլոկի նախարարներ եւ ներկայացուցիչներ Սփիւռքից[18]:

Ի լուր սփիւռքահայ գործարար հատուածի՝ Սարգսեանը յայտարարեց, որ ՋՀԳն վերակառուցուելով դառնալու է սփիւռքահայ եւ ընդհանրապէս արտասահմանեան ներդնողներին համախմբող կենտրոն՝ իւրաքանչիւրին առանց բիւրոկրատական քաշքշուկների ընձեռելով անհրաժեշտ տեղեկատուութիւն ՀՀ տնտեսական եւ իրաւական դաշտի մասին: Ներդնողները Գագիկ Եղիազարեանի կողմից ղեկավարուող այս կառոյցի միջոցով հնարաւորութիւն էին ստանում գրանցել իրենց ընկերութիւնները եւ ստանալ անհրաժեշտ արտօնագրերը: Գործակալութիւնն ունենալու էր չորս վարչութիւն[19], ուր Սփիւռքը ներկայացուած էր լինելու հայաստանաբնակների հետ հաւասարաչափ, մասնագէտները լինելու էին բանիմաց եւ փորձառու, աշխատելու էին լաւագոյն գրասենեակներում եւ ստանալու էին բարձր աշխատավարձ՝ կախման մէջ չլինելով ոչ ոքից: Այս եւ այլ բոլոր ծախսերը կառավարութիւնը վերցնում էր իր վրայ: Նախատեսւում էր գործակալութեան գրասենեակների ստեղծում արտերկրում, մասնաւորապէս Լոնդոնում, Նիւ Եորքում, Լոս Անջելըսում, Բէյրութում եւ Մոսկուայում: Հայրենիքի կառուցման գործընթացում ներգրաւուելու էին նաեւ սփիւռքահայ երիտասարդ կադրերը: Իւրաքանչիւր ամսուայ 15-16ը վարչապետը յայտարարում էր տնտեսական հարցերով ընդունելութիւնների օր:

Այդ եւ այլ կարգի հարցերի համակարգման համար խորհրդաժողովին առաջարկւում էր ստեղծել տնտեսական զարգացման մշտական եանձնաժողով, որի անդամների առնուազն կէսը եւ ղեկավարը լինելու էին սփիւռքահայեր[20]: Եանձնաժողովի համար, որպէս աշխատանքային մարմին, կարող էր հանդէս գալ ՀՋԳն: Եանձնաժողովի եւ սփիւռքահայ գործարարների, ընկերութիւնների, քաղաքական եւ տնտեսական գործիչների միջեւ ցանկալի էր համարւում լաւ նախապատրաստուած փոքր խորհրդաժողովների անցկացումը, որոնց հնարաւոր ֆինանսական ծախսերը կառավարութիւնը կարող էր վերցնել իր վրայ:

Համաշխարհային Բանկի եւ ԱՄՆ դեսպանատան հետ իրականացուելու էր կոռուպցիայի դէմ պայքարի համապարփակ ծրագիր[21]: Ներդրումների համար բարենպաստ դաշտի ձեւաւորումը բարոյական խնդրից զատ, համարւում էր գործնական նպատակ: Վարկերի իւրացումների եւ կոռուպցիայի յայտնի պատմութիւնների մեղաւորներին ի յայտ բերելու նպատակով վարչապետ Սարգսեանի

գլխաւորութեամբ ստեղծուել էր վարկերի եւ դրամաշնորհների համակարգման եանձնաժողով: Եանձնաժողովի գլխաւոր վարչութեան պետի պարտականութիւնները դրուել էին Սարգսեանի խորհրդական, էներգետիկայի նախկին նախարար Գագիկ Մարտիրոսեանի վրայ[22]: Վարչապետը խոստանում էր ֆինանսատնտեսական գործընթացները դարձնել թափանցիկ:

Սփիւռքահայերին վարչապետն առաջարկում էր մարդասիրական օգնութիւնից անցնել լիարժէք համագործակցութեան: Խոստանալով փոխել մաքսային, տնտեսական, հարկային, քաղաքականութիւնը՝ նա կանխատեսում էր շահաւետ ներդրումներ, քանի որ սփիւռքահայ գործարարները իրենց ձեռնարկների շահաւետ լինելու դէպքում զանգուածաբար կը գային ՀՀ:

Վարչապետը կարեւորեց նաեւ համազգային, համակարգող որեւէ մարմնի ստեղծումը, որը բազում խնդիրներից կը զանազանէր առաւել կարեւորները եւ կ'ուղղորդէր դրանց լուծումը:

Բ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՈՒԱԾ ԱՅԼ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Խորհրդաժողովում ելոյթներ ունեցան նաեւ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասեանը, ՀՀ Արտաքին Գործերի նախարար Վարդան Օսկանեանը, ՀՀ Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեանը, Մայր Աթոռի տեղապահ Ներսէս Արք. Պոզապալեանը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ն, Կ.Պոլսի Պատրիարք Մեսրոպ Արք. Մութաֆեանը, Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհրդի քարտուղար Վեր. Մովսէս Ճանպազեանը, որոնց ելոյթները հիմնականում ազգային ինքնագիտակցութեան եւ ազգային շահերի մասին էին: Նրանք կարեւորում էին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի լուծումը, ՀՀ անվտանգութեան ապահովումը, Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը, դատապարտումն ու հատուցումը, ՀՀի տնտեսութեան աշխուժացումը, շրջափակման դժուարութիւնների յաղթահարումը, արտագաղթի կասեցումը, Սփիւռքի ուծացման դէմ պայքարը, Հայ Եկեղեցու հզօրացումը, երկքաղաքացիութեան արգելքի վերացումը եւն.:

Նախագահ Ղուկասեանն առաջարկեց Սփիւռքին առաւել սերտ համախմբուել Արցախեան Դատը պաշտպանելու գաղափարի շուրջ, ինչն ամէնից առաջ նշանակում էր գործուն մասնակցութիւն ԼՂՀ տնտեսութեան վերականգնմանը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ն, անդրադառնալով Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ հաստատուող նոր յարաբերութիւններին, խորհրդաժողովում ընդգծեց. *«Ազգային քաղաքականութիւն ունենալ՝ նշանակում է միասին գործել: Ո՛չ Հայաստանը Սփիւռքին պէտք է ասի,*

թէ ինչ պէտք է անի, եւ ո՛չ էլ Սփիւռքը՝ Հայաստանին: Հայաստանն ու Սփիւռքը միասին պէտք է որոշեն իրենց անելիքը: Հայաստան պետութիւնը պէտք է ունենայ իր պետական քաղաքականութիւնը, Սփիւռքը՝ իր գաղութային քաղաքականութիւնը: Տարբեր դրուածք ու տարբեր բնոյթ ունեցող իրականութիւններ են Հայրենիքն ու Սփիւռքը: Սակայն միասին գործելը կը նշանակի անպայմանօրէն ունենալ հաւաքական նոյն նպատակները: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր ձեռքն է մեկնում հրամայական դարձած նոր համագործակցութեանը»[23]:

Մայր Աթոռի տեղապահ Ներսէս Արք. Պոզապալեանը խօսեց ՀՀ ներթափանցած աղանդների մասին եւ Հայ Առաքելական Եկեղեցու դիրքերի սասանման մասին: «Այսօր Հայրենիքն ու Սփիւռքը կարիք ունեն փոխադարձ օգնութեան, աջակցութեան, սատարումի: Սփիւռքը, նիւթական օգնութիւնից, կարեւոր ներդրումներից զատ, պէտք է դառնայ կամուրջ, նոր ու նորովի մի կամուրջ՝ համաշխարհային գործընթացներում ինտեգրացնելու համար Հայաստանի գիտական, մշակութային, արտադրատնտեսական ներուժը, իսկ Հայրենիքը պիտի շարունակի լինել այն հողը, այն քուրան, որից հոգեւոր-մշակութային էներգիա, ազգային շունչ ու ոգի պիտի առնի աշխարհի չորս ծագերում ապրող հայը՝ իր վրայից թօթափելով սոսկ կրօնական ու ազգային ներամփոփ համայնքի ներկայացուցիչ լինելու գաղափարը: Թիկունքում հզօր, անկախ Հայրենիք ունենալը վերացական պատրանք չէ այլեւս, այլ յարատեւութեան, ինքնութեան հաստատման աներկբայ կռուան: Եւ այս Հայրենիքին՝ Հայաստան աշխարհին պէտք է լիիրաւ տէր ու ծառայ դառնայ հենց ինքը՝ հայ մարդը՝ անկախ բնակութեան վայրից:

Եթէ հայի՝ աշխարհով մէկ սփռուած լինելու պարագան երեկ համարւում էր մեր դժբախտութիւնը, ապա այսօր, հեռատես ու խոհեմ քաղաքականութեան շնորհիւ, կարելի է այն վերածել աննախադէպ առաւելութեան: Անհրաժեշտ է առաջին հերթին ձգտել եւ հասնել երկրի տնտեսութեան առողջացման, պետութեան եւ ներդրողի փոխադարձ վստահութեան, արտերկրի հաւիթեան եւ հայաստանաբնակի շահերի իրատես միասնութեան: Ահա այս դէպքում մենք այլեւս պէտք չենք ունենայ մեր հայեացքն ուղղելու օտար եւ օտարամէտ տարրերի օգնութեանը, որոնք շատ յաճախ հացի հետ խայծ են բերում մեր երկիր՝ մոխրացնելով, կրակին տալով մեր 1700ամեայ կեցուածքի ողջ նկարագիրը:

...Հայի՝ Հայ Առաքելական Եկեղեցու կողքին գտնուելը միայն հաւատի խնդիր չէ, այլ ազգային, պետական-ռազմավարական նշանակութիւն ունեցող պարագայ: ...Հային Հայ Եկեղեցու կողքին պահելը ամէնքիս գործն է, լինի հոգեւորական թէ՝ մտաւորական, պարզ

հաւապացեալ թէ՝ պետական իշխանաւոր, հայասպանաբնակ թէ՝ սփիւռքահայ»[24],- ընդգծեց նա:

Խորհրդաժողովի ընթացքում մասնակիցները մտահոգութիւն յայտնեցին յատկապէս ՀՀից մեծածաւալ արտագաղթի կապակցութեամբ: Նշելով, որ նման խնդրի առաջ կանգնած են անցումային փուլում գտնուող բոլոր երկրները, նախագահ Քոչարեանն ընդգծեց, որ հնարաւորինս արագ պէտք է քայլեր ձեռնարկել ՀՀի տնտեսական վիճակը բարելաւելու ուղղութեամբ, որպէսզի ՀՀից հեռացածները վերադառնան եւ չհասցնեն հիմնաւորուել արտերկրում:

Համահայկական խոշոր կառոյցներից հանդէս եկան ՀԲԸՄի, ՀՕՄի, Ամերիկայի Հայկական Համագումարի, Հայ Դատի Եանձնախմբի ներկայացուցիչները: ՀԲԸՄի անունից հանդէս եկած Պերճ Սեդրակեանն ընդգծեց, որ ՀՀի հզօրացման կարեւորագոյն ազդակը Հայրենիքի տնտեսութեան վերականգնումն է, որին էլ ուղղուած է Միութեան կողմից ՀՀում իրականացուող 40 մլն. դոլարի ծրագրերը[25]: Բարձրացնելով արտագաղթի կասեցման խնդիրը՝ նա կարեւորեց պետութեան կողմից բիւրոկրատական բարդութիւնների յաղթահարման անհրաժեշտութիւնը, արտագաղթի կասեցման կենսական ծրագրերի մշակումը:

Ելոյթներով հանդէս եկան նաեւ հայ աւանդական երեք կուսակցութիւնների ներկայացուցիչները, ովքեր հիմնականում միաբան էին համահայկական նշանակութիւն ունեցող ձեռնարկներին իրենց մասնակցութիւնը բերելու պատրաստակամութեան առումով: Արտագաղթի խնդրին անդրադարձաւ նաեւ ՍԴՀԿից Վահրիճ Ճերէճեանը, ով ընդգծեց արտագաղթի վտանգաւոր հետեւանքները թէ՛ Արցախեան Հիմնահարցի, թէ՛ հայոց պետականութեան համար եւ կարեւորեց միասնաբար արտագաղթի վտանգի կասեցման անհրաժեշտութիւնը, համատեղ լոբբինգի եւ քարոզչութեան կազմակերպումը եւ Արցախի պահպանումն ու զօրացումը:

Սփիւռքի պատուիրակները կարեւորեցին ներգաղթի կազմակերպումը, ինչի համար առաջարկեցին ստեղծել աշխատանքային խումբ: Սակայն, վարչապետ Սարգսեանը նշեց, որ ՀՀն այդ մասին պաշտօնապէս կը խօսի, երբ կ'ունենայ դրա տնտեսական եւ բարոյական իրաւունքը, երբ մօտ ապագայում կ'ունենայ տնտեսական զարգացում: *«Արտագաղթը ողբերգութիւն է, բայց եկէք աւելի չսարսափեցնենք իրավիճակը: Մեր հայրենիքը կտրուած ծառերի, լքուած տների երկիր չէ: Հայաստանը շէն երկիր է եւ հայերը ապրում են Հայաստանում»*[26]-յայտարարեց նա:

ՀՅԴ Բիւրոյի անդամ Կարօ Արմէնեանն անդրադարձաւ տարածաշրջանում հայոց անկախ պետականութեան լինելիութեան խնդրին, ՀՀի առջեւ ծառացած երկու խնդիրներին՝ տնտեսութեան եւ

արտաքին քաղաքականութեան հիմնախնդիրներին: Ըստ Արմէնեանի՝ ՀՀն կովկասեան տարածաշրջանում գործող միջազգային ուժերի ձեռքին պատանդ պետութիւն չդառնալու համար պէտք է «հայկական կողմ» հասկացութեան մէջ ներառի նաեւ Սփիւռքը՝ որպէս քաղաքական ուժ[27]:

ՌԱԿ ներկայացուցիչ Խաչիկ Ադամեանն անդրադարձաւ Հայ Դատի, Հայոց Ցեղասպանութեան, Արցախեան Հիմնահարցի, Հայաստանեայց Եկեղեցու, լեզուական, երկքաղաքացիութեան արգելքի վերացման խնդիրներին: Հանդէս գալով եկեղեցու երկփեղկուածութեան վերացման օգտին՝ նա նշեց, որ Էջմիածնի գերագոյն իշխանութիւնը պէտք է ընդունուի բոլորի կողմից՝ պահպանելով Կիլիկիայի աթոռի սկզբնական սահմանները[28]:

ՀՅԴ ՀՀի ԳՄ ներկայացուցիչ, ԱԺ պատգամաւոր Վահան Յովհաննիսեանն ընդգծեց, որ արդէն թոյլ են տրուած բոլոր հնարաւոր եւ անհնար սխալները եւ մնում է միայն դրանք ուղղելը: Նա կոչ արեց զօրացնել Հայրենիքը, գոհութեան եւ միաւորման առանցքային գաղափար համարելով *«Հայ դատը իր բովանդակ իմաստով՝ հայ մարդու արժանավայել գոհութեան պայմանների ստեղծմամբ»*[29]:

Խորհրդաժողովում «Միասնութիւն» դաշինքի տեսակէտները ներկայացրեց Անդրանիկ Մարգարեանը, Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեանը՝ Սերգէյ Բադալեանը, «Օրինաց Երկիր» Կուսակցութեանը՝ Սերգէյ Երիցեանը, ԱԺՄ Կուսակցութեանը՝ ՀՀի առաջին վարչապետ Վազգէն Մանուկեանը: Մշակոյթի գործիչների խօսքը խորհրդաժողովում հնչեցրին Սիլվա Կապուտիկեանը եւ Վահէ Օշականը: Սփիւռքահայ մշակոյթի պահպանութեան համար Օշականը ընդգծեց միասնական լեզուի հարցը[30]:

Խորհրդաժողովում հնչեցին առաջարկներ նաեւ Սփիւռքի հարցերով կառավարական եանձնաժողովի փոխարէն համապատասխան նախարարութիւն ստեղծելու վերաբերեալ[31]: Նպատակայարմար էր համարւում Սփիւռքի հարցերով նախարարի պաշտօնի համատեղումը ՀՀ վարչապետի կամ ՀՀ Արտաքին Գործերի նախարարի կողմից: Նախագահ Քոչարեանը նման նախարարութեան ստեղծումը հնարաւոր համարեց:

Այսպիսով ՀՀ-Սփիւռք առաջին համահայկական խորհրդաժողովի մասնակիցները կարեւորեցին Սփիւռքի եւ ՀՀի միջեւ առկայ անջրպետի վերացումը, հաւութեան համախմբուած լինելը, փոխճանաչողութիւնը, Սփիւռքի հետ կապ հաստատելու նպատակով կառավարական մակարդակով կենտրոնի ստեղծումը, ՀՀի տնտեսական զարգացումն ապահովելու համար բիզնէսի զարգացման հիմնադրամի ստեղծումը, ՀՀի եւ Սփիւռքի միջին եւ փոքր բիզնէսի հեռանկարային ծրագրերը վարկաւորելու նպատակով համահայկական բանկի ստեղծումը[32] եւն.:

Քննարկուած հիմնարար հարցերն էին՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչում եւ դատապարտում, Արցախեան Հիմնահարց եւ ՀՀի տնտեսական զարգացում:

ՀՀ-Սփիւռք համահայկական առաջին խորհրդաժողովի վերջին ակորդը գործարար հանդիպումն էր սփիւռքահայ գործարար շրջանակների ներկայացուցիչ-պատուիրակների հետ, որտեղ ՀՀ կառավարութեան, կազմակերպութիւնների ներկայացուցիչները՝ Արմէն Դարբինեանի գլխաւորութեամբ ներկայացնում էին, որ ՀՀն նախորդ տարիների համեմատ առաջընթաց է ապրել:

ՀՀ-Սփիւռք առաջին խորհրդաժողովն ընդունեց երկու հիմնարար փաստաթուղթ. Հռչակագիր եւ Յայտարարութիւն Արցախի մասին:

Հռչակագրում ամրագրուեցին աշխարհասփիւռ հայութեան համազգային առաջնահերթութիւնները, յստակեցուեցին այն սկզբունքներն ու պարտաւորութիւնները, որոնցով հայութիւնը պէտք է առաջնորդուէր, ինչպէս միասնաբար, այնպէս էլ առանձին-առանձին՝ առկայ խնդիրներին համապատասխան:

Հռչակագրով խորհրդաժողովի մասնակիցները գտնում էին, որ ՀՀն ու նրա պետական կառոյցներն անհրաժեշտութիւն ունեն վերահիմաստաւորելու իրենց դերը՝ ի պաշտպանութիւն Սփիւռքի շահերի եւ իղձերի:

Հռչակագիրը վերահաստատում էր հայութեան եանձնառութիւնը՝ հաւաքական, համատեղ ուժերով հասնելու միջազգային հանրութեան կողմից Հայոց Ցեղասպանութեան անվերապահ ճանաչմանն ու դատապարտմանը[33]:

Ազգային մեծ իրագործում հռչակելով նոր հազարամեակի շէմին Արցախի ազատագրումը օտարի լծից՝ Հռչակագիրն ազդարարում էր, որ ՀՀն ու Սփիւռքը այսուհետ եւս շարունակելու են սատարել իր նախնեաց հողերին պաշտպան կանգնած եւ ազատ ապրելու իրաւունք նուաճած արցախահայութեան ազատ եւ անվտանգ ապրելու կամքին, Արցախի զօրացմանն ու զարգացմանը:

Արցախին վերաբերող յայտարարութիւնը իր ճակատագիրը տնօրինելու Արցախի ժողովրդի օրինական իրաւունքի իրագործումը վճռորոշ էր համարում ողջ հայութեան ապագայի համար: Յայտարարութիւնն առաջնային էր համարում Արցախի ժողովրդի ինքնորոշման վերահաստատումը, ինչը ենթադրում էր ԼՂՀ ճանաչումը որպէս միջազգային իրաւունքի սուբեկտ[34]:

ՀՀ-Սփիւռք խորհրդաժողովը ցոյց տուեց, որ ՀՀն ու Սփիւռքը միասնական են համազգային հարցերի շուրջ: Միեւնոյն ժամանակ մասնակիցները հասկանում էին, որ խորհրդաժողովը միանգամից չի լուծելու հայութեանը հուզող բոլոր խնդիրները եւ չի տալու բոլոր հարցերի

պատասխանները, սակայն համարում էին, որ այն պէտք է *«...սկիզբ դնի աշխարհում հայութեան կազմակերպուածութեան նոր բարձր աստիճան ապահովելուն»*[35]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հայաստան-Սփիւռք առաջին խորհրդաժողովն առաջին անգամ էր կազմակերպւում հայ իրականութեան մէջ եւ ըստ էութեան խորհրդանշական մեծ բնոյթ ունէր: Առաջին անգամ անկախ ՀՀի պայմաններում մէկ յարկի տակ էին հաւաքուել համայն հայութեան գրեթէ բոլոր ներկայացուցիչները, որը ոգեւորիչ դեր կատարեց եւ հիմք հանդիսացաւ յետագայ նմանատիպ հանդիպումների համար:

Անշուշտ, խորհրդաժողովն արժեւորեց հայ իրականութեան համար այնպիսի հիմնարար արժէքների պահպանումն ու փոխանցումը սերունդներին, ինչպիսիք էին համայն հայութեան համախմբումն ու միաբանութիւնը ազգային գերխնդիրների լուծման շուրջ, ՀՀի հզօրացումն ու զարգացումը, Հայաստան-Սփիւռք-Արցախ եռամիասնութիւնը, հայութեան ներուժի լիարժէք կենսագործումը, հայապահպանութիւնը Սփիւռքում:

2. Առաջին խորհրդաժողովում էր, որ ընդունուեցին «Հռչակագիր» եւ «Յայտարարութիւն Արցախի Մասին», սահմանուեցին համազգային առաջնահերթութիւնները, որոնք էին՝ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումն ու դատապարտումը, Արցախեան հիմնահարցի կարգաւորումը, Հայաստանի տնտեսական վերելքին նպաստելը[36]: Յետագայ խորհրդաժողովների ժամանակ այս հիմնական առաջնահերթութիւններին աւելացան նորերը, որոնց լուծմանն ու իրականացմանը պէտք է ձեռնամուխ լինէր ամբողջ հայութիւնը:

3. Թէեւ խորհրդաժողովում քննարկման դրուեցին հայութեանը յուզող բազմաթիւ հարցեր ու հիմնախնդիրներ, այնուամենայնիւ, յետագայ տարիները ցոյց տուեցին, որ դրանց հիմնական մասը մնացին լոկ առաջարկութիւններ, իսկ որոշների իրականացման համար պահանջուեցին տարիներ:

4. Խորհրդաժողովում երկքաղաքացիութեան ընդունման վերաբերեալ բարձրացուած առաջարկները իրականութիւն դարձան միայն 2008 Ապրիլին, սահմանադրական բարեփոխումներից յետոյ, երբ «Քաղաքացիութեան Մասին» ՀՀ օրէնքում ընդունուած փոփոխութիւնների հիման վրայ ՀՀում ներդրուեց երկքաղաքացիութեան ինստիտուտը: Իհարկէ, սկզբնական շրջանում օրէնքը զերծ չէր թերութիւններից, ինչը դժգոհութեան տեղիք տուեց սփիւռքահայութեան շրջանում, սակայն ժամանակի ընթացքում այն զգալիօրէն բարեփոխուեց եւ յարմարեցուեց նրանց պահանջմունքներին:

5. Խորհրդաժողովն արձանագրեց, որ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման ուղղութեամբ հենց Սփիւռքն է, որ սկսել է պայքարը՝ ծաւալելով աշխուժ *լոբբիստ*ական գործունէութիւն եւ արձանագրելով գործնական յաջողութիւններ այդ ոլորտում[37]:

6. ՀՀի տնտեսութեանը զարկ տալու համար երկրի իշխանութեան բարձրաստիճան ներկայացուցիչները մեծ տեղ էին յատկացնում յատկապէս Սփիւռքին եւ ընդգծում էին մարդասիրական օգնութիւնից դէպի կազմակերպչական գործունէութեան դաշտ անցնելու անհրաժեշտութիւնը: Իհարկէ, պետութիւնն հասկանում էր, որ այդ ասպարէզում յաջողութեան հասնելու համար նախ եւ առաջ անհրաժեշտ է «փոխադարձ վստահութիւն եւ հանդուրժողականութիւն», որն առաջին հերթին պէտք է ապահովէր Հայրենիքը: Խորհրդաժողովում թէեւ անչափ կարեւորուեց սփիւռքահայերի ներդրումային քաղաքականութեան աշխուժացումը Հայաստանում, նրանց համար տնտեսական գործունէութեան բարենպաստ միջավայրի ստեղծումը, սակայն մինչ օրս այդպէս էլ ՀՀն չի կարողանում ներդրումային գրաւիչ քաղաքականութիւն վարել եւ գործունէութեան նպաստաւոր դաշտ ստեղծել սփիւռքահայ գործարարների համար: ՀՀի իրաւական, ֆինանսական, հարկային, մաքսային համակարգն այդպէս էլ ճկուն չդարձաւ, ֆինանսատնտեսական գործընթացները շարունակեցին մնալ ոչ-թափանցիկ, ուստի այդ ամէնը եւ առկայ վարչարարական քաշքշուկները, կաշառակերութիւնը եւս յանգեցրին սփիւռքահայերի շրջանում վստահութեան անկմանը, ներդրումային քաղաքականութեան ձախողմանը:

7. Թէեւ խորհրդաժողովում ՀՀ պետական այրերի կողմից մեծ տեղ յատկացուեց Զարգացման Հայկական Գործակալութեանը, որը պէտք է դառնար համահայկական եւ բոլոր ներդրողներին համախմբող իւրօրինակ կենտրոն եւ ուղղուած լինէր Սփիւռքի ներուժի ուղղորդմանը դէպի հայաստանեան տնտեսութեան զարգացում, սակայն ԶՀԳն այդպէս էլ չդարձաւ նման լայն գործառոյթներով օժտուած մարմին եւ չծառայեց բուն նպատակին, ինչի համար նախատեսուած էր ի սկզբանէ:

8. Խորհրդաժողովում բազմիցս արծարծուած արտագաղթի խնդիրը չլուծուեց. այն առկայ է մինչեւ մեր օրերը եւ շարունակում է մնալ որպէս օրակարգային ու հրատապ խնդիր:

9. Հայոց լեզուի միասնականութեան հարցը եւս մինչ օրս մնում է օրակարգային. երկու լեզուների մերձեցման ուղղութեամբ ձեռնարկուած քայլերը դեռեւս երերուն են եւ անվճռական: Խնդիրն առաւել քան երբեւէ հրատապ է, մանաւանդ որ արեւմտահայերէնը վտանգուած է եւ

ԻՒՆԵՍԿՕի կողմից դասուել է «առանձնապէս վտանգուած լեզուներ»ի շարքին:

10. Անշուշտ երիտասարդութեան համախմբմանը միտուած ծրագրերը լայն կիրառում ստացան նաեւ յետագայում: Մինչ օրս արդիւնաւէտ կերպով տեղի են ունենում համահայկական մարզական խաղեր, բազում մշակութային փառատօներ, երիտասարդական հաւաք-համաժողովներ, որոնք Սփիւռքի հայ երիտասարդութեանը ծանօթացնում են Հայրենիքին, նպաստում նրանց ազգային ինքնութեան պահպանմանն ու հայրենաճանաչութեանը:

11. Խորհրդաժողովում մեծ տեղ յատկացուեց նաեւ Սփիւռքի մասնագիտական ներուժի համախմբմանն ու զարգացմանը: Այդ նպատակով պարբերական դարձաւ եւ յետագայում լայն կիրառում գտաւ մասնագիտական հանդիպումների, համաժողովների կազմակերպման ու անցկացման գործընթացը, որոնց արդիւնքում ստեղծուած համահայկական ընկերակցութիւնները, միաւորելով աշխարհի հայ ոսկերիչներին, գործարարների, ճարտարապետների, մշակոյթի գործիչների, նպաստում էին այդ ճիւղերի զարգացմանն ու բնագաւառային հեռանկարային ծրագրերի իրականացմանը:

12. Խորհրդաժողովում Սփիւռքի հարցերով զբաղուող համապատասխան նախարարութիւն ստեղծելու առաջարկն իրականութիւն դարձաւ միայն 2008ին, երբ ստեղծուեց Սփիւռքի հետ աշխատող պետական կառավարման մարմին՝ Սփիւռքի Նախարարութիւն:

13. Իրականութիւն դարձաւ նաեւ «Համահայկական Բանկ»ի ստեղծման գաղափարը: 2009 Մարտին ՀՀ Կենտրոնական Բանկի որոշմամբ հիմնադրուեց «Համահայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերութիւնը, որը ձեռնարկութիւնների զարգացման դրամատուն է: Դրամատան պաշտօնական բացումը տեղի է ունեցել 2011 Սեպտեմբերի 7ին: Դրամատան գործունէութիւնը կարգաւորւում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից: Դրամատան նպատակը միջազգային ելեւմտական կազմակերպութիւններից եւ զարգացմանն ուղղորդուած մասնաւոր աղբիւրներից երկարաժամկէտ նիւթական միջոցների հաւաքագրումն է եւ այդ միջոցները Հայաստանում հիմնադրուած եւ գործող մրցունակ ձեռնարկութիւններին յատկացումը՝ երկարաժամկէտ վարկերի կամ բաժնային ներդրումների տրամադրման միջոցով:

14. Իհարկէ ՀՀն գիտակցում էր, որ Սփիւռքն իր բազմազանութեամբ ունի իր առանձնայատկութիւնները եւ նրա հետ յարաբերութիւններում պէտք է առաջնորդուել այդ ամէնը հաշուի առնելով, սակայն, մինչ օրս այդ ոլորտում առկայ են լուրջ բացեր ու բազում չլուծուած խնդիրներ: Թէեւ առաջին խորհրդաժողովը նախատեսում էր սփիւռքահայութեան

մասնակցութեան ձեւերի մշակում հայոց ազգային պետականութեան հաստատման ու զօրացման գործին, յետագայ տարիներին այդ ուղղութեամբ ձեռնարկուած փորձերը ցանկալի արդիւնք չտուեցին: Մինչ օրս էլ Սփիւռքը անմասն է լիարժէք կերպով այդ գործընթացին մասնակցութիւնից: Ճիշտ է Սփիւռքը շարունակեց իր ներուժը ներդնել Հայաստանի գիտութեան, կրթութեան, առողջապահութեան, տնտեսական եւ այլ ոլորտներում, իր աջակցութիւնը շարունակեց երկրաշարժի հետեւանքների վերացմանն ու անցումային շրջանում գտնուող Հայաստանի ընկերային խնդիրների լուծմանը, փորձեց Հայաստանում եւ Արցախում մարդասիրական ծրագրերից անցում կատարել ձեռնարկատիրական գործունէութեան, սակայն երկրի օրէնսդրական դաշտի անկատարութիւնը յանգեցրեց նրան, որ բազմաթիւ սփիւռքահայեր հիասթափուեն եւ կորցնեն վստահութիւնը մի շարք ծրագրերի արդիւնաւէտ կենսագործման հարցում:

Այսպիսով առաջին եւ յետագայ տարիներին հրաւիրուած խորհրդաժողովներում արծարծուած այն հարցերը, որոնք վերաբերում էին սփիւռքահայերի մասնակցութեանը ազգային պետականութեան ամրապնդմանը եւ համազգային խնդիրների լուծմանը, նոյնպէս մինչ օրս շարունակում են մնալ զուտ քննարկումների եւ կիրառելի ձեւերի որոնման փուլում: Որոշ տեսաբաններ, ելնելով Սփիւռք ունեցող մի շարք երկրների փորձից, գտնում են, որ ի թիւս մի շարք խոչընդոտների, գործընթացի ձգձգմանը խանգարում է նաեւ Սփիւռքի ապակենտրոնացումը, նրան համախմբող մէկ, միասնական կառոյցի բացակայութիւնը: Եւ պատահական չէ, որ այդ ուղղութեամբ վերջին տարիներին ձեռնարկուած քայլերը կարծես թէ դրւում են իրական հողի վրայ. Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովը 2015 Սեպտեմբերի 26ին Երեւանում տեղի ունեցած 6րդ նիստում որոշում ընդունեց Համահայկական Խորհուրդ ձեւավորելու մասին: Ստեղծուեց Համահայկական Խորհրդի ձեւաւորման կազմակերպչական յանձնախումբ, որի կազմում ընդգրկուած են պետական, հոգեւոր, համահայկական կառոյցների ներկայացուցիչներ: Ժամանակի ընթացքում պարզ կը դառնայ, թէ արդեօ՞ք կառոյցը յաջողեց իր նպատակներում՝ դառնալով համայն հայութեանը միաւորող կարեւորագոյն գործիք եւ հանգրուան:

15. Հայաստան-Սփիւռք առաջին խորհրդաժողովն արձանագրեց ակնյայտ այն իրողութիւնը, որ սեփական զարգացման ուղին բռնած անկախ Հայաստանը պէտք է յաղթահարի բազում ներքին եւ արտաքին դժուարութիւններ, որոնց կարող է դիմակայել միմիայն

կազմակերպուածութեամբ, զօրեղացմամբ ու Հայաստան-Սփիւռք-Արցախ անխախտ եռամիասնութեամբ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Հայաստան-Սփիւռք առաջին համահայկական խորհրդաժողովի կողմից ընդունուած հիմնական փաստաթղթերին ու ծրագրային առաջարկներին առաջիկայում կ'անդրադառնանք մեր յաջորդ յօդուածներում:

[2] *Հայաստանի Հանրապետութիւն*, 23.09.1999. նաեւ՝ «Հայաստանը Համայն Հայութեան Հայրենիքն է», *Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի*, 1999, N 4 (12), Հոկտեմբեր, էջ 6:

[3] Նոյն. նաեւ՝ Ք. Պետրոսեան, *Հայրենիք-Սփիւռք Յարաբերութիւնները 1988-2001թթ.*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2011, էջ 46. նաեւ՝ *Երկիր*, 23.09.1999. նաեւ՝ Harut Sassounian, "Second Diaspora-Armenia Conference Should Be Results-Oriented. Not a Show", 07.02.2002 (http://groong.usc.edu/ADconf/200205/ad-20020207.html). նաեւ՝ UN Office for the Coordination of Humanitarian Affairs, "OCHA Situation Report for Armenia - Sep 1999", 30.09.1999 (http://reliefweb.int/report/armenia/ocha-situation-report-armenia-sep-1999). նաեւ՝ "The Armenian Diaspora" (http://armenianstudies.csufresno.edu/hye_sharzhoom/vol21/october67/news.htm):

[4] *Ազգ*, 24.09.1999. նաեւ՝ Ք. Պետրոսեան, *Հայրենիք-Սփիւռք*, էջ 46:

[5] Նախագահ Ռոբերտ Քոչարեանի ելոյթը Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովին (22.09.1999), http://2rd.am/hy/Nakhagah-Robert-Kocharyani-eluyty-Hayastan-Spyurq-arajin-Korhrdajoghovin, 26.09.2012. նաեւ՝ *Հայաստանի Հանրապետութիւն*, 23.09.1999. նաեւ՝ «Հայաստանը Համայն Հայութեան Հայրենիքն է», էջ 6. նաեւ՝ *Հայոց Աշխարհ*, 23.09.1999:

[6] Նոյն. նաեւ՝ *Respublika Armenia* (Հայաստանի Հանրապետութիւն), 23.09.1999. նաեւ՝ Ք. Պետրոսեան, «Հայրենիք-Սփիւռք Քաղաքական Առնչութիւնները 1990ական թթ.», *Կանթեղ, Գիտական Յօդուածների Ժողովածու, Գիրք 3* (36), Երեւան, Ասողիկ, 2008, էջ 152:

[7] Նախագահ Ռոբերտ Քոչարեանի ելոյթը Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովին. նաեւ՝ *Հայաստանի Հանրապետութիւն*, 23.09.1999. նաեւ՝ *Respublika Armenia,* 23.09.1999:

[8] Նոյն:

[9] Նոյն:

[10] Նոյն:

[11] *Ասպարէզ*, 24.09.1999. նաեւ՝ *Հայաստանի Հանրապետութիւն*, 24.09.1999. նաեւ՝ "Prime Minister Vazgen Sargsyan's Speech at the Armenia-Diaspora Conference" (23.09.1999), 13.12.1999 (http://www.groong.com/ADconf/199909/speeches/vazgen.html):

[12] *Հայաստանի Հանրապետութիւն,* 24.09.1999. նաեւ՝ *Երկիր*, 24.09.1999. նաեւ՝ "Prime Minister Vazgen Sargsyan's Speech":

[13] Նոյն:

[14] Նոյն:
[15] Նոյն:
[16] *Երկիր*, 24.09.1999. նաեւ՝ "Prime Minister Vazgen Sargsyan's":
[17] *Հայաստանի Հանրապետութիւն*, 24.09.1999. նաեւ՝ "Prime Minister Vazgen Sargsyan's":
[18] Նոյն:
[19] *Ազգ*, 24.09.1999. նաեւ՝ "Prime Minister Vazgen Sargsyan's":
[20] *Հայաստանի Հանրապետութիւն*, 24.09.1999:
[21] *Ազգ*, 24.09.1999. նաեւ՝ *Ասպարէզ*, 24.09.1999. նաեւ՝ *Հայոց Աշխարհ*, 24.09.1999. նաեւ՝ *Երկիր*, 24.09.1999:
[22] *Ազգ*, 24.09.1999:
[23] *Երկիր*, 23.09.1999. նաեւ՝ *Respublika Armenia*, 24.09.1999.
[24] «Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պոզապալեանի Ողջոյնի Խօսքը՝ Ասուած Հայաստան-Սփիւռք Համահայկական Խորհրդաժողովի Բացմանը», *Էջմիածին, Պաշտօնական Ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի*, Օգոստոս-Սեպտեմբեր, 1999, էջ 17-18. նաեւ՝ *Ազգ*, 23.09.1999:
[25] Նոյն. նաեւ՝ Berge Setrakian, "AGBU's Address at the Armenia-Diaspora Conference" (1999), 25.01. 2000 (http://www.groong.com/ADconf/199909/speeches/agbu.html):
[26] *Հայոց Աշխարհ*, 24.09.1999:
[27] Նոյն:
[28] *Ազգ*, 24.09.1999:
[29] *Հայաստանի Հանրապետութիւն*, 24.09.1999:
[30] Նոյն. "Vahe Oshagan's Statement at the Armenia-Diaspora Conference" (1999) http://www.groong.com/ADconf/199909/speeches/oshagan.html):
[31] *Respublika Armenia*2 24.09.1999.
[32] *Երկիր*, 24.09.1999:
[33] *Հայոց Աշխարհ*, 24.09.1999. նաեւ՝ *Respublika Armenia*, 28.09.1999.
[34] *Հայոց Աշխարհ*, 24.09.1999:
[35] Նախագահ Ռոբերտ Քոչարեանի ելոյթը. նաեւ՝ *Հայաստանի Հանրապետութիւն*, 23.09.1999. նաեւ՝ *Respublika Armenia*, 23.09.1999.
[36] Յետագայ տարիներին եւս Սփիւռքը շարունակեց իր մասնակցութիւնը «Հայաստան» Համահայկական ծրագրին՝ Ազգային տուրքի միջոցով մասնակցելով հայրենիքում իրականացուող ռազմավարական մի շարք ծրագրերի կեանքի կոչմանը:
[37] Անկախութեան պայմաններում այդ գործընթացին լծակից եղաւ նաեւ ՀՀն, որի գագաթնակէտը Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցի միջոցառումներն էին: 2011 Ապրիլին ՀՀ Նախագահ Սարգսեանի հրամանագրով ստեղծուեց Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողով, իսկ Սփիւռքում ստեղծուեցին 61 տարածաշրջանային յանձնախմբեր (50

երկրներում), որոնք 2015ի Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցի առիթով բազմաթիւ քաղաքական, քարոզչական, կրթամշակութային եւ այլ բնոյթի ձեռնարկներ անցկացրեցին ամէնուր:

A NEW FORMAT OF ARMENIA-DIASPORA COOPERATION:
THE FIRST ARMENIA-DIASPORA CONFERENCE
(Summary)

KNARIK PETROSYAN
k_narik@mail.ru

On 22-23 September 1999 the first Pan-Armenian Armenia-Diaspora Conference, which was to build a qualitatively new level of Armenia-Diaspora relations, organize solid cooperation in accordance with modern requirements, discuss joint Pan-Armenian issues and outline their resolutions2 was held in Yerevan. Over 1200 representatives from 50 countries participated in the conference. There were about 70 speeches, which were mainly related to politics, economy and culture. Among the key speakers were President Robert Kocharyan and PM Vazgen Sargsyan. The main discussed issues discussed related to the recognition and condemnation of the Armenian Genocide, the Nagorno-Karabakh conflict and the economic development of Armenia.

The article underlines the importance of the issues raised, and briefly analyzes the implementation of some of the resolutions about the issues raised. The author notes that some of the concerns raised were addressed in due time, others were partly resolved while certain topics still remain pending and unaddressed, due to bureaucratic failures.